Հավելված 5

«ԷԱՃԱՊՁԲ ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-21/1 »* ծածկագրով

էլեկտրոնային աճուրդի հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-21/1-1

ք. Երևան ____/_____/2021թ.

« ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ »-ը ի դեմս Ա. Արշակյան ի, որը գործում է « ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և « ՎԱՌՄ ՍՊԸ »-ը, ի դեմս տնօրեն Ռուզաննա Առաքելյան ի, որը գործում է « ՎԱՌՄ ՍՊԸ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տպագրության և առաքման ծառայություններ աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների։

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին համապատասխան և N 2 հավելվածով սահմանված աշխատանքի կատարման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում։

2. **ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 և/կամ N 2 հավելվածին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքը անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը։ Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 և/կամ N 2 հավելվածով սահմանված պահանջներին,

բ)խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը։

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին։

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը։

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը։

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը։

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին։

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը: Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում

էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 1634889.60 AMD(մեկ միլիոն վեց հարյուր երեսունչորս հազար ութ հարյուր ութսունիննը դրամ վաթսուն լումա) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն։7 17

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները։

Աշխատանքի մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը։

8 19

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով։ Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. **ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար։

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի *0,5* (*զրո ամբողջ հինգ տասնորդական*) տոկոսի չափով:921Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերորդական*) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերորդական*) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ

պահելով մյուս կողմին։

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Պատվիրատուի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը։

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը [5]։

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության։ Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության։

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար։ Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է։

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում։

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը։

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման։

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

11[6]

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են։

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա։ Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները

կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը։

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 N 4 և N 4.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

—

-

-

8. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու	**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	**ՎԱՌՄ ՍՊԸ**
Նալբանդյան 13	**Տիգրան Մեծ 48, 43**
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	**Արդշինբանկ**
900011037919	**2472303727050000**
02505511	**00488698**
ARSHAKYAN ASHOT 3708660056 Digitally signed by ARSHAKYAN ASHOT 3708660056 DN: c=AM, sn=••••••••, givenName=•••, serialNumber=64f4cd5e53ec, cn=ARSHAKYAN ASHOT 3708660056 Date: 2021.09.29 09:22:24 +04'00'	Digitally signed by ARAKELYAN RUZANNA 5512790064 Date: 2021.09.27 17:31:15 AMST
----------	**----------**
/ստորագրություն/	**/ստորագրություն/**
Կ.Տ	**Կ.Տ**

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ։

-

17[6]Կիրառվում է, եթե կնքվում էնախագծայինփասաթղթերիքաղաքաշինականփորձաքննության ծառայություններիմատուցմանպայմանագիր

[17]Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

[8]Կատարողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիքպայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուիև Կատարողիմիջև համաձայնեցված չափով:Եթեպայմանագրովչինախատեսվումկանխավճարիհատկացում, ապասույն կետըհանվումէնախագծից:

[9]Եթեպայմանագիրըկնքվելէ«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման
վրա, ապատուգանքըհաշվարկվումէայնհամաձայնագրիգնինկատմամբ, որի շրջանակումարձանագրվելէստանձնվածպարտավորությունների չկատարմանկամոչպատշաճկատարմանհանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[10]Պետականբյուջեիմիջոցներիհաշվինպարտավորություններչառաջացնող գնումներիդեպքումսույննախադասությունը պայմանագրիցհանվումէ:

[11] Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

[12]Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

[13]Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ

նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով:Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Հավելված N 1
____/_____/2021թ. կնքված
ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-21/1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ դրամ

Աշխատանքի			
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	79821170/10	տպագրական — առաքման ծառայություններ	Ձևաթուղթ - 14900 հատ - տպագրման եղանակը՝ օֆսեթային, 1 գույնով, 80 գ/մ2, A4 ֆորմատի, միակողմանի տպագրությամբ, փաթեթավորված: Իր մեջ ներառում է 8 անուն ձևաթուղթ. • 9000 հատ - Ծանուցում բժշկասոցիալական փորձաքննման որոշման (ԲՍՓՀ և ԱՄ պատասխանատու) • 300 հատ - Տեղեկանք վարչական ակտից (Մահվան պատճառի մասին) • 2000 հատ - Դիմում-բողոք • 200 հատ Դիմում-այլ երկրի քաղաքացի • 2000 հատ - Ծանուցում բժշկասոցիալական փորձաքննական որոշման մասին (Վերափորձաքննության բաժնի պետ) • 100 հատ - Աջակցող միջոցներով ապահովման բաժնի դիմում մինչև 16 տարեկան երեխաների • 1100 հատ - Աջակցող միջոցներով ապահովման բաժնի դիմում 16 տարեկանից բարձր • 200 հատ - Աջակցող միջոցներով ապահովման բաժնի արձանագրություն

			Ձևաթղթերի էլեկտրոնային տարբերակը կտրամադրի պատվիրատուն: * Յուրաքանչյուր ձևաթուղթ առանձին փաթեթավորված, եթե մեկ անուն ձևաթղթի քանակը գերազանցում է 1000-ը, ապա յուրաքանչյուր փաթեթում ձևաթղթի քանակը պետք է լինի 1000 թերթ:
2	79821170/11	տպագրական — առաքման ծառայություններ	Ձևաթուղթ – 62700 հատ - տպագրման եղանակը՝ օֆսեթային, 1 գույնով, 80 գ/մ2, A4 ֆորմատի, երկկողմանի տպագրությամբ, փաթեթավորված: Իր մեջ ներառում է 5 անուն ձևաթուղթ. • 60000 հատ - Դիմում բժշկասոցիալական փորձաքննության ենթարկելու • 100 հատ - Վարչական վարույթի անձի մահվան պատճառը արտադրական խեղման, մասնագիտական հիվանդության, ռազմաճակատում գտնվելու, զինծառայության և այլ հանգամանքների հետ կապելու ԲՍՓ գործ N • 100 հատ - Բժշկասոցիալական փորձաքննական որոշման քաղվածք մասնագիտական աշխատունակության կորստի աստիճանի մասին տոկոսներով • 1000 հատ - Թերթիկ ԲՍՓ և աջակցող միջոցներով վարչության վերափորձաքննության բաժնի փորձաքննական խորհրդատվության • 1500 հատ - Աջակցող միջոցներով ապահովման բաժնի եզրակացություն Ձևաթղթերի էլեկտրոնային տարբերակը կտրամադրի պատվիրատուն: * Յուրաքանչյուր ձևաթուղթ առանձին փաթեթավորված, եթե մեկ անուն ձևաթղթի քանակը գերազանցում է 1000-ը, ապա յուրաքանչյուր փաթեթում ձևաթղթի քանակը պետք է լինի 1000 թերթ:
3	79821170/12	տպագրական — առաքման ծառայություններ	Ձևաթուղթ – 15000 հատ - տպագրման եղանակը՝ Օֆսեթային, 1 գույնով, 160 գ/մ2, A4, երկկողմանի, կոշտ, ձևաթղթերը փաթեթավորված: • 15000 հատ - Փորձաքննված անձի ԲՍՓ գործ N Ձևաթղթերի էլեկտրոնային տարբերակը կտրամադրի պատվիրատուն: * Յուրաքանչյուր ձևաթուղթ առանձին

			փաթեթավորված, եթե մեկ անուն ձևաթղթի քանակը գերազանցում է 1000-ը, ապա յուրաքանչյուր փաթեթում ձևաթղթի քանակը պետք է լինի 1000 թերթ:
5	79821170/14	տպագրական — առաքման ծառայություններ	Ձևաթուղթ – 26000 հատ - տպագրման եղանակը՝ Օֆսեթային, 1 գույնով, 80 գ/մ2, A5 , միակողմանի, ձևաթղթերը փաթեթավորված: Իր մեջ ներառում է 3 անուն ձևաթուղթ. • 3000 հատ - Ձև՝ հասցեի փոփոխման • 20000 հատ - Ծանուցում բժշկասոցիալական փորձաքննական որոշման մասին (Բժշկական կազմակերպություն) • 3000 հատ - Բժշկասոցիալական փորձաքննական որոշում Ձևաթղթերի էլեկտրոնային տարբերակը կտրամադրի պատվիրատուն: * Յուրաքանչյուր ձևաթուղթ առանձին փաթեթավորված, եթե մեկ անուն ձևաթղթի քանակը գերազանցում է 1000-ը, ապա յուրաքանչյուր փաթեթում ձևաթղթի քանակը պետք է լինի 1000 թերթ:
6	79821170/15	տպագրական — առաքման ծառայություններ	Ձևաթուղթ - 54000 հատ - տպագրման եղանակը՝ Օֆսեթային, 1 գույնով, 220 գ/մ2, A5 երկկողմանի /կրկնակի համարակալված/, ձևաթղթերը փաթեթավորված: Իր մեջ ներառում է 2 անուն ձևաթուղթ. • 50000 հատ - Բժշկասոցիալական փորձաքննական որոշման քաղվածք N • 4000 հատ - Բժշկասոցիալական փորձաքննական որոշման քաղվածք մինչև 18 տ երեխայի N Ձևաթղթերի էլեկտրոնային տարբերակը կտրամադրի պատվիրատուն: * Յուրաքանչյուր ձևաթուղթ առանձին փաթեթավորված, եթե մեկ անուն ձևաթղթի քանակը գերազանցում է 1000-ը, ապա յուրաքանչյուր փաթեթում ձևաթղթի քանակը պետք է լինի 1000 թերթ:
7	79821170/16	տպագրական — առաքման ծառայություններ	Ձևաթուղթ – 1000 հատ - տպագրման եղանակը՝ Օֆսեթային, 1 գույնով, 80 գ/մ2, A5 , երկկողմանի, ձևաթղթերը փաթեթավորված: • 1000 հատ - Թերթիկ ԲՍՓ և աջակցող միջոցներով ապահովման վարչության վերափորձաքննության

			բաժնի մեկ մասնագետի փորձաքննական խորհրդատվության Ձևաթղթերի էլեկտրոնային տարբերակը կտրամադրի պատվիրատուն: * Յուրաքանչյուր ձևաթուղթ առանձին փաթեթավորված, եթե մեկ անուն ձևաթղթի քանակը գերազանցում է 1000-ը, ապա յուրաքանչյուր փաթեթում ձևաթղթի քանակը պետք է լինի 1000 թերթ:
9	79821170/18	տպագրական — առաքման ծառայություններ	Գրանցամատյան – 266 հատ - ձևը՝ հորիզոնական, թերթերի քանակը՝ 200, տպագրման եղանակը՝ Օֆսեթային, 1 գույնով, էջերի թղթի տեսակը՝ 70 գ/մ2, հիմնական չափսերը՝ 60Х84/8, կազմարարություն՝ թելակար, ջերմասոսնձված, կնիքի համար նախատեսված կապերով, թերթերը պետք է լինեն համարակալված, կազմի տեսակը՝ Ստվարաթուղթ՝ 1500գ/մ2, լիդերինապատ: Իր մեջ ներառում է 7 անուն գրանցամատյան. • 2 հատ - Եզրակացությունների տրամադրման գրանցամատյան • 1 հատ - Քաղաքացիների կողմից վերադարձված աջակցող միջոցի հաշվառման գրանցամատյան • 1 հատ - Ժամանակավոր օգտագործման համար տրամադրված աջակցող միջոցի հաշվառման գրանցամատյան • 120 հատ - Դիմումների հիման վրա հարուցված գործերի հաշվառման գրանցամատյան • 90 հատ - Վարչական ակտերի հաշվառման գրանցամատյան • 50 հատ - Փորձաքննված անձանց ԲՍՓ գործերի հաշվառման գրանցամատյան • 2 հատ - Անձի բողոքի հիման վրա հարուցված գործերի հաշվառման գրանցամատյան Ձևաթղթերի էլեկտրոնային տարբերակը կտրամադրի պատվիրատուն:
10	79821170/19	տպագրական — առաքման ծառայություններ	Գրանցամատյան – 65 հատ - ձևը՝ ուղղահայաց, թերթերի քանակը՝ 200, տպագրման եղանակը՝ Օֆսեթային, 1 գույնով, էջերի թղթի տեսակը՝ 70 գ/մ2, հիմնական չափսերը՝ 60Х84/8, կազմարարություն՝ թելակար, ջերմասոսնձված, կնիքի համար նախատեսված կապերով, թերթերը պետք է լինեն

			համարակալված, կազմի տեսակը՝ Ստվարաթուղթ՝ 1500գ/մ2, լիդերինապատ: Իր մեջ ներառում է 3 անուն գրանցամատյան. • 50 հատ - Քաղվածքները կենսաթոշակ նշանակող մարմիններին հանձնելու գրանցամատյան • 13 հատ - Այբբենական գրանցամատյան • 2 հատ - Փորձաքննական խորհրդատվությունների գրանցամատյան Ձևաթղթերի էլեկտրոնային տարբերակը կտրամադրի պատվիրատուն:
12	79821170/21	տպագրական — առաքման ծառայություններ	Գրանցամատյան – 200 հատ - ձևը՝ հորիզոնական, թերթերի քանակը՝ 30, տպագրման եղանակը՝ Օֆսեթային, 1 գույնով, էջերի թղթի տեսակը՝ 70 գ/մ2, հիմնական չափսերը՝ 60Х84/8, , կազմարարություն՝ թելակար, ջերմասոսնձված, կնիքի համար նախատեսված կապերով, թերթերը պետք է լինեն համարակալված, կազմի տեսակը՝ Ստվարաթուղթ՝ 1500գ/մ2: Իր մեջ ներառում է 4 անուն գրանցամատյան. • 50 հատ - Քաղվածք-տեղեկանքների շարժի գրանցամատյան • 50 հատ - Մարմնի կողմից տրամադրվող պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն ու սպասարկում ստանալու ուղեգրերը հաշվառելու գրանցամատյան • 50 հատ - Տեղափոխվող և ստացվող ԲՍՓ գործերի շարժի գրանցամատյան • 50 հատ - Տնային կամ հիվանդանոցային պայմաններում բժշկասոցիալական փորձաքննություն իրականացված անձանց հաշվառման գրանցամատյան Ձևաթղթերի էլեկտրոնային տարբերակը կտրամադրի պատվիրատուն:

* աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ **ԿԱՏԱՐՈՂ**

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Նալբանդյան 13

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

900011037919

02505511

Ա. Արշակյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

ARSHAKYAN ASHOT 3708660056

Digitally signed by ARSHAKYAN ASHOT 3708660056
DN: c=AM, sn=••••••••, givenName=••••, serialNumber=64f4cd5e53ec, cn=ARSHAKYAN ASHOT 3708660056
Date: 2021.09.29 09:22:51 +04'00'

ՎԱՌՄ ՍՊԸ

Հասցե՝ Տիգրան Մեծ 48, 43

Արդշինբանկ

2472303727050000

00488698

Ռուզաննա Առաքելյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by ARAKELYAN RUZANNA 5512790064
Date: 2021.09.27 17:31:37 AMST

Հավելված N 2
____/_____/2021թ. կնքված
ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-21/1 ծածկագրով պայմանագրի

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի					
չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
				հասցեն	ժամկետը**
դրամ	68539.20	68539.20	1	Ք. Երևան, Նալբանդյան 13	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հետո 20 օրացույցային օրվա ընթացքում:
դրամ	300960.00	300960.00	1	Ք. Երևան, Նալբանդյան 13	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հետո 20 օրացույցային օրվա ընթացքում:
դրամ	135000.00	135000.00	1	Ք. Երևան, Նալբանդյան 13	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հետո 20 օրացույցային օրվա ընթացքում:
դրամ	57199.20	57199.20	1	Ք. Երևան, Նալբանդյան 13	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից

					հետո 20 օրացույցային օրվա ընթացքում:
դրամ	432000.00	432000.00	1	Ք. Երևան, Նալբանդյան 13	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հետո 20 օրացույցային օրվա ընթացքում:
դրամ	4692.00	4692.00	1	Ք. Երևան, Նալբանդյան 13	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հետո 20 օրացույցային օրվա ընթացքում:
դրամ	399000.00	399000.00	1	Ք. Երևան, Նալբանդյան 13	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հետո 20 օրացույցային օրվա ընթացքում:
դրամ	97500.00	97500.00	1	Ք. Երևան, Նալբանդյան 13	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հետո 20 օրացույցային օրվա ընթացքում:
դրամ	139999.20	139999.20	1	Ք. Երևան, Նալբանդյան 13	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հետո 20 օրացույցային օրվա ընթացքում:

* աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
Հասցե՝ Նալբանդյան 13
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
900011037919
02505511
Ա. Արշակյան

_____
/ստորագրություն/
Կ.Տ

ARSHAKYAN ASHOT 3708660056

Digitally signed by ARSHAKYAN ASHOT 3708660056
DN: c=AM, sn=••••••••, givenName=••••, serialNumber=64f4cd5e53ec, cn=ARSHAKYAN ASHOT 3708660056
Date: 2021.09.29 09:23:03 +04'00'

ԿԱՏԱՐՈՂ
ՎԱՌՄ ՍՊԸ
Հասցե՝ Տիգրան Մեծ 48, 43
Արդշինբանկ
2472303727050000
00488698
Ռուզաննա Առաքելյան

_____
/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by ARAKELYAN RUZANNA 5512790064
Date: 2021.09.27 17:31:50 AMST

Հավելված N 3
____/_____/2021թ. կնքված
ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-21/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			Հնվ.	Փտր.	Մրտ.	Ապր.	Մայ.	Հուն.	Հուլ.	Օգս.	Սեպ.	Հոկ.	Նոյ.	Դեկ.	Ընդամենը
1	79821170/10	տպագրական — առաքման ծառայություններ								34269.60	34269.60	68539.20	68539.20	68539.20	68539.20
2	79821170/11	տպագրական — առաքման ծառայություն								150480.00	150480.00	300960.00	300960.00	300960.00	300960.00

		ներ													
3	79821170/12	տպագրական — առաքման ծառայություններ								67500.00	67500.00	135000.00	135000.00	135000.00	135000.00
5	79821170/14	տպագրական — առաքման ծառայություններ								28599.60	28599.60	57199.20	57199.20	57199.20	57199.20
6	79821170/15	տպագրական — առաքման ծառայություններ								216000.00	216000.00	432000.00	432000.00	432000.00	432000.00
7	79821170/16	տպագրական — առաքման ծառայություններ								2346.00	2346.00	4692.00	4692.00	4692.00	4692.00
9	79821170/18	տպագրական — առաքման ծառայություններ								199500.00	199500.00	399000.00	399000.00	399000.00	399000.00
10	79821170/19	տպագրական — առաքման ծ								48750.00	48750.00	97500.00	97500.00	97500.00	97500.00

		առայություն ներ												
12	79821170/21	տպագրական — առաքման ծառայություններ								69999.60	69999.60	139999.20	139999.20	139999.20	139999.20

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
Հասցե՝ Նալբանդյան 13
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
900011037919
02505511
Ա. Արշակյան

_____
/ստորագրություն/
Կ.Տ

ARSHAKYAN ASHOT 3708660056

Digitally signed by ARSHAKYAN ASHOT 3708660056
DN: c=AM, sn=••••••••, givenName=••••, serialNumber=64f4cd5e53ec, cn=ARSHAKYAN ASHOT 3708660056
Date: 2021.09.29 09:23:14 +04'00'

ԿԱՏԱՐՈՂ
ՎԱՌՄ ՍՊԸ
Հասցե՝ Տիգրան Մեծ 48, 43
Արդշինբանկ
2472303727050000
00488698
Ռուզաննա Առաքելյան

_____
/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by ARAKELYAN RUZANNA 5512790064
Date: 2021.09.27 17:32:02 AMST

Հավելված N 4
____/_____/2021թ. կնքված
ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-21/1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» «____» 20___ թ.
Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20__թ.
Պայմանագրի համարը՝ ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-21/1-1
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «_____» «_____» 20___թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայման ագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայման ագրով հաստատված գնման ժամանակացույցի			
1	տպագրական — առաքման ծառայություններ							

	ր							
2	տպագրական — առաքման ծառայություններ							
3	տպագրական — առաքման ծառայություններ							
5	տպագրական — առաքման ծառայություններ							
6	տպագրական — առաքման ծառայություններ							
7	տպագրական — առաքման ծառայություններ							
9	տպագրական — առաքման ծառայություններ							
10	տպագրական — առաքման ծառայություններ							
12	տպագրական — առաքման ծառայություններ							

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	**Աշխատանքը ընդունեց**
_____	_____
ստորագրություն	**ստորագրություն**
_____	_____

ազգանուն, անուն

Կ.Տ.

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված N 4.1
____/_____/2021թ. կնքված
ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-21/1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_____

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ -ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ՎԱՌՄ ՍՊԸ (այսուհետ՝ Կատարող)
միջև 20__թ._____ -ին կնքված N ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-21/1-1 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20__թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով
Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)
տպագրական — առաքման ծառայություններ	դրամ	
տպագրական — առաքման ծառայություններ	դրամ	
տպագրական — առաքման ծառայություններ	դրամ	
տպագրական — առաքման ծառայություններ	դրամ	
տպագրական — առաքման ծառայություններ	դրամ	
տպագրական — առաքման ծառայություններ	դրամ	
տպագրական — առաքման ծառայություններ	դրամ	
տպագրական — առաքման ծառայություններ	դրամ	
տպագրական — առաքման ծառայություններ	դրամ	

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց **Ընդունեց**

_____

ազգանուն, անուն

_____

Ստորագրություն

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____

ազգանուն, անուն

_____

Ստորագրություն